ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ **62**

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

01-ը հոկտեմբերի 2022թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 30-ը, որից 3-ը zoom.us-ի միջոցով:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում:

   / Զեկուցող ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Աթոյան** /

2. 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում:

   / Զեկուցող ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյան** /

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի (նոր խմբագրությամբ) հաստատում:

   / Զեկուցող Իրավախորհրդատու **Ն. Նազարյան** /

4. ԵՊՀ ԻՄ-ի 2023թ.-ի առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկում:

   / Զեկուցող ԵՊՀ ԻՄ տնօրեն **Ա. Մակարյան** /

5. **Ընթացիկ հարցեր**

   5.1. Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի 2021-2022 ուստարվա հաշվետվությունը:

   /Զեկուցող ԿԲԴՎ բաժնի վարիչ **Ն. Գրիգորյան/**

5.2. Փոփոխություն ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի կազմում։

/Զեկուցող ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Աթոյան/**

5.3. «Դեկորատիվ-կիրառական արվեստ» բակալավրի կրթական ծրագրի հաստատում։

/Զեկուցող Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան **Վ. Աղաբաբյան/**

5.4. Փոփոխություններ ԵՊՀ ԻՄ 2021թ.-ի նոյեմբերի 30-ի 55/2 որոշմամբ հաստատված ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգում։

/ Զեկուցող ԵՊՀ ԻՄ տնօրեն **Ա. Մակարյան** /

Բաց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

ՈՐՈՇՈՒՄ

- Հաստատել նիստի օրակարգը։

<u>Օրակարգի առաջին</u> **՝** «ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում» հարցի հետ կապված լսեցին ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղար **Մ.Աթոյանի** հաղորդումը։

Նա մանրամասն ներկայացրեց նիստերի ժամանակացույցը, նշեց, որ ժամանակացույցը կազմվել է համաձայն ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարության և ԵՊՀ-ի Գիտական խորհրդի համապատասխան ժամանակացուցի, ընդգրկվել են նաև ստորաբաժանումների ղեկավարների և գիտական խորհրդի անդամների կողմից ներկայացված հարցերը՝ մասնավորապես առաջարկներ էին ստացվել ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանի և ԿԲԴՎ բաժնի վարիչ Ն. Գրիգորյանի կողմից։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանը, փոխտնօրեն Մ.Օթարյանը, Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա.Մարգարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը և այլոք։

Մասնավորապես, արտահայտվողները առաջարկեցին ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2022թ. եկամուտների և ծախսերի

նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին» հարցը հունվարից տեղափոխել դեկտեմբեր՝ ԵՊՀ գիտխորհրդի ժամանակացույցին համապատասխան, «Հաղորդում 2022թ.-ի բակալավրի ընդունելության արդյունքների մասին» հարցը հստակեցնել և վերաձևակերպել «Հաղորդում 2022թ.-ի բակալավրի ընդունելության արդյունքների մասին (առկա և հեռակա ուսուցում)», «Ստորաբաժանումների հաշվետվություններ /2021-2022 ուստարի/» հարցը հստակեցնել և վերաձևակերպել «ԵՊՀ ԻՄ ստորաբաժանումների 2021-2022 ուստարվա հաշվետվություններն ըստ ԵՊՀ ԻՄ 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի իրականացման», առաջարկ եղավ նաև հանել «Ընթացիկ հարցեր» տողը:

Բաց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ N 62/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցը, համաձայն հավելված1-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգի երկրորդ</u> **՝** «2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ **Ա.Դավթյանի** հաղորդումը:

Նա ներկայացրեց 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը՝ հավելված 2: Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում ունենք 15 անվանական կրթաթոշակ, 3-ը՝ արտաբյուջետային, 3-ը՝ համամասնաճյուղային: Նշվեց, որ ունեցել ենք 24 հավակնորդ, գործող կարգերին համապատասխան հարցերը քննարկվել են ֆակուլտետների գիտական խորհուրդներում, և ուսումնական մաս են ներկայացվել համապատասխան

ցուցակները, չեն ներկայացվել թեկնածուներ «Մխիթար Գոշ» և «Երկրապահ» անվանական կրթաթոշակների համար։ Նա նշեց, որ ստուգվել են ներկայացված բոլոր թեկնածուների համապատասխանությունը ԵՊՀ ԻՄ համապատասխան գործող կանոնակարգերի պահանջներին և ընտրվել է 13 ուսանող /տես հավելված 2/։ Նշվեց, որ քննարկումներին մասնակցել են նաև ԵՊՀ ԻՄ–ում գործող ուսանողական կառույցների ներկայացուցիչները։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, Մ. Զուրաբյանը և այլոք։

Մասնավորապես Մ. Զուրաբյանը նշեց, որ անհրաժեշտ է «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի համար սահմանել հատուկ անվանական կրթաթոշակ, որպեսզի հնարավոր լինի դիմել ՀՀ-ում «Ռուսական տուն» կազմակերպությանը ֆինանսավորում ստանալու համար։

Ա. Մակարյանը նշեց, որ Բնական գիտությունների ֆակուլտետի դասախոս Գ.Սարգսյանը իր անձնական միջոցների հաշվին 5 ուսանողի հատկացրել է կրթաթոշակ։

Բաց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 62/2

Ղեկավարվելով ‹‹Երևանի պետական համալսարան›› հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և ‹‹Երևանի պետական համալսարան›› հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով, ‹‹Երևանի պետական համալսարան›› հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել 2022-2022 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը, համաձայն հավելված 2-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

***<u>Օրակարգի երրորդ</u>*՝** ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ (նոր խմբագրություն) հաստատում»

հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ իրավախորհրդատու Ն. Նազարյանի հաղորդումը։ Նա նշեց, որ ԵՊՀ-ի 2022թ. փետրվարի 24-ի թիվ 7 նիստում հաստատել է համապատասխան կանոնակարգը նոր խմբագրությամբ, որը և տեղայնացվել է ԵՊՀ ԻՄ-ի համար։ Ի տարբերություն հին կանոնակարգի այստեղ ավելացել են մի քանի կետեր, մասնավորապես, 7.2, 7.3, 8, 9 կետերը, որոնք եղել են պետության կողմից ֆինանսավորվող։ Կանոնակարգը ամբողջությամբ կարող եք տեսնել հավելված 3-ում։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, Փոխտնօրեն Մ.Օթարյանը, Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա.Մարգարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը և այլոք։

Մասնավորապես փոխտնօրեն Մ.Օթարյանը առաջարկեց 23 կետը տեղափոխել առաջ, որպեսզի ուսանողների համար առավել տեսանելի լինի: Ա.Մակարյանն էլ առաջարկեց «Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը սահմանվում է ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով» արտահայտությունը փոխարինել «Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը սահմանվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով» արտահայտությամբ:

Բաց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 62/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և ‹‹Երևանի պետական համալսարան›› հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, ‹‹Երևանի պետական համալսարան›› հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը (նոր խմբագրությամբ)՝ համաձայն հավելվածի 3-ի,
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

<u>Օրակարգի չորրորդ</u> ՝ «ԵՊՀ ԻՄ-ի 2023թ.-ի առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը։ Ա.Մակարյանը նշեց, որ ցանկը ուղարկված է եղել նախարարություն հաստատելու համար, սակայն առաջարկ է եղել հայցվող տեղերի քանակը ներկայացնել իրական պահանջարկին մոտ։ Այնուհետև Ա.Մակարյանը ներկայացրեց 2018-2022թթ. ԵՊՀ ԻՄ ընդունված ուսանողների թվաքանակը ըստ կրթական ծրագրերի և 2023թ. ընդունելության լիցենզավորված հատկացված տեղերը՝ առաջարկվող ուղղումներով՝ հավելված 4։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Մ.Միքայելյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի վարիչ Ն.Գրիգորյանը և այլոք։

Մասնավորապես արտահայտվողները առաջարկեցին ցանկը ուղարկել հաստատման համաձայն հավելված 4-ի։

Բաց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 62/4

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 3-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի 2023թ.-ի առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկը, համաձայն հավելված 5-ի:
2. Ցանկը ներկայացնել ԵՊՀ՝ ՀՀ Կառավարություն փոխանցելու համար։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ընթացիկ հարցեր՝

5.1.Լսեցին «Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի 2021-2022 ուստարվա հաշվետվությունը» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի ԿԲԴՎ բաժնի վարիչ **Ն. Գրիգորյանի** հաղորդումը՝

Նա մասնավորապես նշեց, որ ԿԲԴՎ բաժնի կողմից հաշվետու ուստարում իրականացվել են աշխատանքներ՝ հետևյալ ուղղություններով՝

- ***փաստաթղթերի մշակում և վերամշակում*** (20 գործողություն)՝ բաժնի կողմից մշակվել կամ վերանայվել են մասնաճյուղի գործունեության տարբեր ոլորտները կանոնակարգող կամ ուղղորդող 20 փաստաթուղթ,
- ***վերապատրաստումներ*** (25 գործողություն)՝ հաշվետու ժամանակաշրջանում դասախոսական և վարչական անձնակազմի համար իրականացվել է 25 վերապատրաստում, առաջին անգամ ԵՊՀ ԻՄ դասախոսների վերապատրաստման տվյալները հաշվառվել են ՀԾ Ձեռնարկություն համակարգի Կադրեր ենթահամարգում և տարեվերջին ուղարկվել են ամբիոններին և դասախոսներին,
- ***կրթական ծրագրեր՝*** 2022թ. հունվարից մինչև հուլիսի 1-ը՝ ԿԲԴՎ բաժինը համակարգել է ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի 2022-2026 առկա ուսուցման թվով 12, 2022-2027թթ. հեռակա ուսուցման թվով 6 կրթական ծրագրերի և 2022-2024թթ. մագիստրատուրայի 1 կրթական ծրագրի վերանայման ընթացքը: Բաժնի կողմից պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ կրթական ծրագրերի ղեկավարների հետ, տրվել է համապատասխան խորհրդատվություն: Բակալավրի առկա ուսուցման 11 կրթական ծրագրերը ստուգվել են առնվազն երկու անգամ, պատրաստվել են հեռակա ուսուցման թվով 6 կրթական ծրագրերը՝ «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Զբոսաշրջություն» և «Ֆինանսներ»,
- ***պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստումների կազմակերպում և իրականացում՝*** ԿԲԴՎ բաժինը համակարգել է պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման աշխատանքները ԵՊՀ ԻՄ-ում նոյեմբերի 1-ից 30-ը, ըստ

հաստատված դասացուցակի իրականացվել է վերապատրաստման դասընթացներ 10 մոդուլներով: ԵՊՀ ԻՄ-ում վերապատրաստվել են Տավուշի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի 75 ուսուցիչներ (54 դպրոցից), ովքեր հաջողությամբ ավարտել են վերապատրաստման դասընթացները և ստացել համապատասխան կրեդիտներ, պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների համար վերապատրաստումներ իրականացրել են թվով 14 դասընթացավարներ, որոնցից 9-ը՝ ԵՊՀ ԻՄ-ի դասախոսներն են:

Ն. Գրիգորյանի ամբողջական հաշվետվությունը կարող եք տեսնել հավելված 6-ում:

Արտահայտվեցին՝ Ա. Մակարյանը և այլոք:

Մասնավորապես **առաջարկվեց** Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի՝ 2021-2022 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

Բաց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 62/5

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի՝ 2021-2022 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

5.2 Լսեցին «Փոփոխություն ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի կազմում» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Աթոյանի** հաղորդումը:

Նա մասնավորապես նշեց, որ անհրաժեշտ է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի կազմից հանել Հայարփի

Հովսեփի Վանեսյանին (ուսումը ԵՊՀ ԻՄ-ում ավարտելու պատճառով) և նրա փոխարեն կազմում կազմում հաստատել «Հոգեբանություն» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի Միլենա Կարենի Վարդանյանին, որի համար հիմք է հանդիսացել գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի նախագահի զեկուցագիրը։

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 62/6

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 16-րդ կետի 16-րդ ենթակետով, ինչպես նաև «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի կանոնակարգի 2.1 կետը՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի որակի կառավարման մշտական հանձնաժողովի կազմից հանել նախկին ուսանողուհի Հայարփի Հովսեփի Վանեսյանին։
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի որակի կառավարման մշտական հանձնաժողովի կազմում հաստատել «Հոգեբանություն» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի Միլենա Կարենի Վարդանյանին։
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

5.3 Լսեցին ««Դեկորատիվ-կիրառական արվեստ» բակալավրի կրթական ծրագրի հաստատում» հարցի վերաբերյալ Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան Վ. Աղաբաբյանի հաղորդումը։ Վ. Աղաբաբյանը շնորհակալություն հայտնեց «Դեկորատիվ-կիրառական արվեստ» բակալավրի կրթական ծրագրի նախկին ղեկավար Լ. Ֆլջյանին, կրթական ծրագիրը վերջնական տեսքի բերելու, ուսանողների

և դասախոսների հետ քննարկումներ կազմակերպելու համար։ Նա նշեց, որ կրթական ծրագիրը նախօրոք ուղարկվել է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի անդամներին և առաջարկներ չեն եղել, այնուհետև առաջարկեց հաստատել Դեկորատիվ-կիրառական արվեստ (021401.00.6) կրթական ծրագիրը համաձայն հավելված 7-ի։

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 62/7

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1 Հաստատել Դեկորատիվ-կիրառական արվեստ (021401.00.6) կրթական ծրագիրը համաձայն հավելված 7-ի։
2 Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

5.4 Լսեցին «Փոփոխություններ ԵՊՀ ԻՄ 2021թ.-ի նոյեմբերի 30-ի 55/2 որոշմամբ հաստատված ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգում» հարցի մասին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյանի** հաղորդումը։ Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ 2021թ.-ի նոյեմբերի 30-ի 55/2 որոշմամբ հաստատված ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգը պետք է խմբագրվի, որովհետև հակասության մեջ է դրանից հետո հաստատված ուսումնառության կարգի հետ, որն ավելի առաջնային է։ Այնուհետև ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյանը** մանրամասն նշեց, թե ինչ կետեր են խմբագրվել (տես հավելված 8)։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆեսոր Մ. Միքայելյանը և այլոք։

Մասնավորապես, արտահայտվողները առաջարկեցին ուսանողին հնարավորություն ընձեռել, բացառիկ դեպքերում և հարգելի պատճառներով, վերահանձնել հետազոտական աշխատանքը՝ միայն տնօրենի հրամանով:

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 62/8

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 55/2 որոշմամբ հաստատված «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգը» նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 9-ի:
2. Սույն կարգը տարածվում է 2022/2023 ուսումնական տարում և դրանից հետո ԵՊՀ ԻՄ ընդունված ուսանողների վրա:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ